



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

“.....”..... 201 թ.

..... / .....

**ՀՐԱՄԱՆ N 206-Ա**

08 օգոստոսի 2016թ.

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԱՌԻԴԻՏԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 6-րդ գլխի 23.1 կետը, դեկտեմբերի 12-ի N 1096-Ն հրամանի 15-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N 1049-Ն որոշման 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. 2016 թվականի օգոստոսի 8-ից աուդիտի ենթարկել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կարիքների համար տվյալ տարվա ընթացքում գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին ենթակետի հիման վրա իրականացված պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների առնվազն 30 տոկոսը և գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գնումները:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Մարինե Ստեփանյանին՝ իրականացված աուդիտի արդյունքներով ներկայացնել գրավոր հաշվետվություն՝

1) գնման ընթացակարգի մասին՝ գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելու օրվանից երկու ամսվա ընթացքում,

2) կնքված պայմանագրերի կատարման մասին՝ կատարման արդյունքն ընդունվելու օրվանից չորս ամսվա ընթացքում:

3. Գնման ընթացակարգի արձանագրությունների հաստատվելու հաջորդ աշխատանքային օրը դրանց պատճենները Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության պետ՝ Հայկ Հովսեփյանի և «Հայրենիք-Սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Դավիթ Շահբազյանի ստորագրությամբ վավերացված գրություններով ներկայացնել աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:



4. Ապրանքների պահեստ մուտքագրման օրդերների պատճենները Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության պետ՝ Հայկ Հովսեփյանի ստորագրությամբ վավերացված գրությամբ ներկայացնել աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

5. Պատասխանատու ստորաբաժանումների խմբի ղեկավարներին հանձնման-ընդունման արձանագրությունները հաստատվելու հաջորդ աշխատանքային օրը դրանց պատճենները գրությամբ նույնպես ներկայացնել աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ֆիրդուս Զաքարյանին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ**

